

ՎԱՃԱՐԱԿԱՆ

ԹԻՖԼԻՍԻ առևտուրական գաղեք:

Հրատարակումէ շաբաթը մէկ ամ-
դամ կէս թիրթ, կիրակի օրերով: 10
ամսովայ զինը Մարտից մինչև Յունիս-
ը քաղաքում 2 ման. 50 կոտ., դորսը՝
3 մանկի:

ՏԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ

(ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ)

ՅՈՎԱՆԴԻԱԿՈՒԹԻՒՆ:

Տէլութենի կարգադրութիւնները ծառարդների փափառութիւնները, տորդեր: Կովկասեան տրան-
զիմի ճանապարհը թիֆլիսի վրայով: Կեանքումը գործի լաւ սկսել է հարկաւոր: Զանազան տե-
ղեկու թիւններ: Առևտուրական տեղեկութիւններ:
Մասնաւոր յայտարարութիւններ:

“ՎԱՃԱՐԱՌԱԿԱՆԸ”
1867 Թիւն:

Ինչպէս հրատարակել էնք
“Վաճառականի”, 30-դ Ն^o ումը
1867 թւին “Վաճառականը”,
կտապվի էնալիսի թերթերի վրայ,
որ ամիսը հիմնված 4 կէս թերթի
տեղ է-ից մինչև 6-ը լինի իր մե-
ծութենով: Գալ տարվան ստո-
րագրվողները կատանան ձրիա-
բար, Առևտուրական բառարան,,
որի մէջ ամենախիված կլինին թէ
առուտուրին վերաբերեալ գլխա-
ւոր գործածված բառերը և թէ
գլխաւոր վաղերի որբանութիւնը
Ռախ փողի հետ համեմատելով:
1867 թւին “Վաճառականի”,
մէջ կտապվին շարունակ ամեն նու-
մերումը Առևտաց տելեգրաֆի
ընկերութենից, ստացած թէ ա-
ռուտուրին և թէ միւս հատարա-
կական գործերին վերաբերեալ
նոր համբաւները: “Վաճառա-
կանի”, գինը գալ տարի թէ քա-
ղաքում և թէ դուրսը կլինի մ. մ.

Գալ տարի „Վաճառականը”,
կդուրս գայ հինգշաբթի օրերով:
Հիմիկանից ընդունվումէ գուլ-
տարվան ստորագրութիւնը քա-
ղաքում „Վաճառականի”, իրմ-
բարգրովի և նրա գլխաւոր գործ-
ակից պ. Ա. Երիցեանցի մօտ,
նմանապէս և գրավաճառ պ. Ա.
Ենթիաճեանցի գրատանը, իսկ
օտար քաղաքացիները պէտք է
գառնան ուղղակի „Վաճառա-
կանի”, խմբագրովին էս հանցէով
„Վաճառականի”, խմբագրով
Գէորգ Տէր-Աղէքսանդրեան-
ցին Թիֆլիսումը, իսկ Պատրէն՝
”Редактору Тифлисского Торгового
дистка Егору Тер-Александрову въ
Тифлисъ.”

Խնդրում ենք 1867 թւի մեր
գաղեթին ստորագրվել ցանկա-
ցովներից, որ նրանք յայտնեն
իրանց ցանկութիւնը մեզ մինչև
էս տարվան նոյեմբերի վերջը, որ
կարողանանք ստորագրվողների
թւի համեմատ կարդալութիւնն
անել գալ տարվան համար:

Տէրութենի կարագրութիւններ,
Խնդրում էր Փոփուլութիւնը:
Կովկասեան արքունական պալատի բուժ-
գալակերի (հաշւապահի) օգնական, կոլեժ-
ումի սեկրետար ՆԱԶԱՐԵԱՆՑ նշանակվե-
ն Ասիայի համար: Հնդկաստանի, միջն

գաղեթին ստորագրվի կարելի է լուրա-
զրողի մօտ:

Գաղեթումը հրատարակվելու կրնունվին
մասնաւոր յայտարարութիւններ: Գների
մասին կարելի է իմանալ խմբագրատանը:

ցաւ Թիֆլիսի նահանգական դանձարանումը
բուժգալակեր:

Մի և նոյն պալատի բուժգալակերի օգնա-
սական, գուբերնուկի սեկրետար ԶԱՐԴԵ-
ՂԵԱՆՑ նշանակվեցաւ նոյն պալատի սե-
ղանապէս:

Թիֆլիսի կասիկական գիմնազիայի պան-
սիօնի վերակացու, կոլեժակի ասաւոր Տէր-
ՅՈՎԱՆՑ նշանակվեցաւ նոյն գիմ-
նազիայի երթենեկ աշակերտների վերակա-
ցու:

ՏՈՐԳԵՐ:

Կովկասեան ինտենդանտի կառավարու-
թենումը նշանակված է էս հոկտեմբերի 20-ին
թելուրումից Ախալցխայի մազաղնը 960
չեթվերտ ալիր և 106 չեթվերտ կրուպա
հասցնելու աորդը:

Թիֆլիսի գաւառական կառավարութե-
նումը 1867 թւի յունլարի 9-ին նշանակ-
ված է ազնւուհի Աննա Մանդենեանցի Թիֆ-
լիսի 2-դ մասամը և 3 կարտայումը գը-
անված և 2400 մ. զին դրած երկու յարկա-
նոց տան ծախելու աորդը:

ԹԻՖԼԻՍ

Հոկտեմբերի 8—1866.

Թիֆլիսը, ծովից հեռու և առանց
նաւագնաց գետի իր Վիվեկական գրու-
թենով շատ անյարմար է առևտուրական
քաղաք լինելու համար, բայց մի և նոյն
ժամանակը Ռուսաստանի նշանաւոր և
Ասիայի գլխաւոր առևտուրական քաղաք-
ներից մէկն է: Բաղդը բերել է էնակն,
որ Թիֆլիսը վաճառականութենի մէջ
դառել է միջի մարդ, գալալ եւրոպային
և Ասիայի համար: Հնդկաստանի, միջն

Ասիայի, Պարսկաստանի և մէկ մասով էլ
Տաճկաստանի ապրանքները աւելի կարճ՝
միջոցումը, ապահով և սակաւ ծախս
առվ կարող են միմիայն կովկասի վրա
յով անցկենալ Եւրոպայ: Մի և նոյնը
պէտք է ասել և Եւրոպայի ապրանքա-
ների Ասիայումը տարածվելու մասին:
Ասիացու ապրանքները Եւրոպացու ձեռն
անցկենալիս և Եւրոպացոց ապրանքների
Ասիայումը տարածվելիս, բոլորն էլ Թիֆ-
լիսի և Թիֆլիսեցոց ձեռովնի է անցկենում:
Թիֆլիսը քարվանների իջևան է և եթէ
Վրաստանի հին մայրաքաղաքը ապա-
գայումն առևտրական աշխարհումը կա-
րող է մէկ նշանաւոր տեղ բռնել, եղ
միայն իր միջի մարդութենով, իր վե-
րոյիշեալ պաշտօնով: Կամայ ակամայ
ուրեմն ոչ միայն մեր քաղաքը, այլ և
որա հետ ամբողջ Կովկասեան երկիրը
պէտք է աշխատէ ապահովացնել իր եղ
պաշտօնը ապագայի համար:

Մեր վաճառականներից շատ շատերը
դուք բոլորովին և չեն իմացել էսվասնդի
մասին, որը որ պէտք է համարեր կովկասի
տրանզիտի առուտուրին մէկ երեք տա-
րի առաջ և որը որ հիմի էլ մէկ մասրով
սպասվում է: Պարսկաստան, Հնդկաս-
տան և միջին Ասիայ անցկենալու. և
ապրանք տանելու համար բացի կով-
կասը կայ մէկ ուրիշ ձանապարհ, որը
որ կարող էր ժամանակով աւելի մեծ
գործ կատարել, քան թէ մեր կովկա-
սը: Եւրոպայի նաւերը հեշտութենով
Տրավիզոնի նաւահանգիստը մասնելով
ազատվում են դէպի ի բաթում և Փոթի
բարձրանալու հարկաւորութենից: Տրա-
պիկօն դուրս տված ապրանքների քար-
վանները աւելի կարծ միջոցումն Սրբ-
րումի վրայով կարողանում են հասցել
Պարսկաստան, քրե՛չն էլ մի և նոյն ժա-
մանակը համեմատաբար աւելի աժան
է նատում: Քան թէ կովկասի կողմե-
րումը: Սիխիայն երկու մեծ անյարմար-
ութիւն ունէր էդ Տրավիզոնի ձանա-
պարհը, որ հիմի Տաճկաց աէրութիւնը
դիշեր ու ցերեկ աշխատում է վերաց-
նել: Խռաֆին, որ էդ ձանապարհնե-

ին բոլորովին մարդու ձեռը չէ դիպած ուղղելու և շնորհու, էնակիս որ մանաւանդ ցեխի ժամանակը շատ անդամ շանաւոր վկաս էր տալիս քարվաններին և երկրորդ որ Տրավիկոնից մինչեւ արսկաստան համեմը ճանապարհի վրայ բնակվող տեսակ տեսակ վայրենի ոզգերը (մանաւանդ Քուրդերը), որոնք իմիայն աւազակութենով են ապրում, մնդադար կողուստում են քարվանները և Տաճկաց տէրութիւնը շատ քիչ է կարողանում էդ բանին օգնել: Տաճկաց տէրութիւնը լաւ հասկանալով էն մեծ նշանակութիւնը և օգուտները իր երկիրների համար, որը որ էդ տրանշտափահ ճանապարհից կարելի է ապասել, Եւրոպացոց և մանաւանդ Անդլիացոց օգնութենով մէկ քանի տարի առաջ կիեց շնորհ երկաթէ ճանապարհ Տրավիկոնից մինչեւ Պարսկաստանի սահմանը: Էդ շնորհինը մինչեւ հիմի ել արունակվում է և անցեալ շաբաթվան գագեթները հաղորդում են, որ այժմ 3,000 հոգի մշակ գիշեր ու ցեսեկի բանում են էդ ճանապարհի վրայ: Դուսաց տէրութիւնը սառն աչքով չէր կարող ի հարկէ մարիկ տալ Տաճկաստանի էդ պատրաստութենին, որովհետեւթէ էդ ճանապարհը կարողանայ յաջողակ վերջանալ, էն ժամանակը բոլոր սոսուտուրը Տրավիկոնի ձեռը կանցինայ և Կովկասը կըքկվի իր մեծ նշանակութենից: Տրավիկոնի էդ ճանապարհի սկսվելու հետ միասին Ռուսաց տէրութիւնը, նկայելով շատ մեծ դժուառութիւններին, շտապեց Սև ծովը Կասպիս ծովի հետ երկաթէ ճանապարհով կատարելու հօդս տանել: և Փոթուց մինչեւ Թիֆլիս շնովելու երկաթէ ճանապարհի վրայ արդէն հազարաւոր զօրքեր և տեղայի մշակներ են բանում: Յոյս կայ, որ էս ճանապարհը շուտ լինի պատրաստ և առաջն առնէ Տրավիկոնի ճանապարհին: Էս բանի մասին աշխատում է Ռուսաց տէրութիւնը:

ԿԵԱՆՔՈՒՄԸ ԳՈՐԾԻ ԼԱԿ ՍԿԾԵԼ Ե
ՀԱՐԿԱԿՈՅ:

Առաջասարակ լաւ սկիզբը կեանքի լաւ
կանելլ շատ հարկաւոր բան է ջահելների
համար, որպէս կեաւ կեանքի սկզբումը
նարած ու զղութիւնը, վերջը արդէն
ովզութիւն է դառնում և մարդու
նաւորութենի հիմք: Պատուաւոր կեր-
պով գործունէութենի սկսելիս բարի լի-
նելլ էնպէս հեշտ է դառնում, ինչպէս
և չար և վատ լինիլը: «Լաւ սկիզբը—
գործի կէսն է», ասումէ առածք: Նատ
սննդամ պատահել է, որ սկզբումը մեծ
նորհներ ունեցող ջահելները, բոլորու
ին մխասվել են՝ կեանքի սկզբումը ծու-
ր քայլ անելու պատճառով: պատա-
հում է և էնպէս, որ շատ քիչ ընդու-
ակութիւններ ունեցողները աւելի յա-
ռողութիւն են ունեցել, որպէս ետև իւ-
անց գործունէութենի առաջին քայլը
անսնաւոր է էլել և յետոյ շրունակ
լարել են իրանց գործը սկսածին յար-
նարացնելով: Լաւ սկիզբը, կարելի է ա-
նելլ ասահովութիւն է ողջ գործի բա-
նելաջող վերջանալունը: Նատ խեղձ
նարդիկ ողորմելի վիճակումն են, թէ-
զէտ գրանք կարող էին և միջակ կեանք
լայիելլ, եթէ միայն ապագայի յոյսե-
ռով չքաւականանային, այլ սկսել էին իրա-
ւամանակին գործը և լաւ սկսել էին ապ-
ոյիլ կեանքումը կեանքի պահանջմունք-
երի պարմար:

Շատերը սաստիկ անհամբեր են և
ուտ են ուզում աշխատանքի պառուղ-
ութերը վայելել: Եթքախախ մարդիկը պառուղն
են ուզում առանց իրանց սեփհական
աշխատանքի և փոխանակ բան շնորհու-
րանք սկսում են արդէն հանգստանալ:
Անդիխացի Խւմը մէկ անգամ պատգա-
մատօրների ժողովաւթն ասել է, թէ Անդ-
խացիքը չափիցը դուրս շռայլ կեանք են
լարում: Ժողովոդի միջնն կարգը սովոր
է իր բոլոր աշխատածի ուտելուն և
ուրբեմն էլ իր դադածիցն էլ աւելի է
հախում և էդ բանը շատ վատ ազգե-
ցութիւն ունի ողջ հասարակութենի
իրայ: Ամենքը իրանց որդեկրանցը ու-

զում են բարձր կարդի մարդկանց պէս կրթութիւն տալ: Եզուրիցն էն է առաջանում, որ երեխաները և երիտասարդները սովորում են շապիկ, ու տել, խմել: բայց չեն կարողանում իսկ մարդու բնաւորութիւնի հաստատ հիմքնել իրանց սրտի և մոքի մեջ:

Մարդիկ ստոտիկ փառասիրութեանից կամենում են վայելու լինիկ: Մենք հետեւում ենք արտաքին ձևերին, շատ անդամ պատւաւորութիւնը խախտեալով էդուրից թէպէտ հարուստ էլ չենք լինում, պարտաւոր ենք համարում մեղ հարուստ ցոյց տալու: Մենք էնքան համբերութիւն չունինք քաջութենով առաջ գնալու էն ճանապարհով, որի վրայ մենք կանդինած ենք. բայց մենք մեղ պարտաւոր ենք համարում մողաներին յարմարացնել մեր կեանքը և ի հարկի, կարծիք չկայ, որ էդ ցանակութիւնը շատ անհիմը բան է, որովհետեւ էդ ցանկութիւնի սպատակն է համելի դարդականի փառասիրութեանին էն աշխարհութեան, որի մեկ մասը մենք հազմում: Մորաների աշխարհի առաջին կարգութը և առաջինը լինելու համար անդադար կռիւներ են թագաւորում, ձեշշում են մարդիկ միմեանց. եւ էդպիսի խառնակութիւնների ժամանակը շատ պատաւոր, վեհանձն և ազնիւ մարդիկ ուների տակն են ընկնում և շատ անգամ ոչնչանում: Փառամեր լինելու համար մարդիկ ստիպված են հազար ու մեկ խարեւայութիւններ բանեցնելու և էդ մարդիկը համարձակվում են անպատիւ մարդ կոչվել, բայց խեղճ չերելի:

Զարդը նեպիրը չնդկաստանից դուրս գալիս հրամանաթուղթ զբեց իր զօրքին, որով նա նախատում էր իր զինաւորականներին նրանց շապիկ կեանք վարելու համար, որի պատճառով նրանք ստիպված էին զանազան ցած գործեր անելու: Խսկապէտ ջենալմեն լինելու համար, զինի սա իր հրամանաթղթումը, հարկաւոր է պատւաւորութիւն, բայց ձրի համարականի դիմու խմելը և

կառքերով մանգալը չէ ջենալմենութիւն, այլ խարեւայութիւն: Պատերազմիլ, կոմիլ ամեն մարդ կարող է. բայց խսկապէտ մարդը պէտք է հաստատ լինի իր խօսքին և իր պարտքերը վճարէ անմարդութիւնը մեր սրտի մէջ էն բարի ցանկութիւնը ները, որ միջոց են տալիս վատի հետ կռւելու: Խսդուր համար հարկաւոր, է, որ երիտասարդները իրանց լաւ ձանաչեն, սովորին իրանց բնաւորութիւնը և իրանց միտքն ու գործունէութիւնը յարմարացնեն իրանց ընտրած լաւ ուղղութենին: Փանի մարդ աւելի է ձանաչում ինքն իրան, էնքան աւելի համեստ և պարկեշտ է լինում և աւելի քիչ կախումն է ունենում պատահամունքներից: Բոլոր յաղթութիւններից, զօրաւորն էն է, երբ մարդ կեանքի մէջ պատերազմելիս իր ժամանակաւոր նշն վայելութիւններից զրկում է իրան էն մոքով, որ ապագայի համար հաստատ բարօրութիւն ձարէ:

Յուգո Միլէրը պատմում է, թէ ինչպէս է նա յաղթել իր վատ սովորութիւններից մէկին: Սա իր ընկերների հետ քար կտրող է էլէլ Անդլիայումը և էդտեղ բանելիս մէկ անդամ սրան երկու թան արաղ ընկաւ: Խմեց բոլորը, զնաց տուն և բեկոնի շարադրութիւններից մէկը վեր առաւ և կարգում էր: Տեսաւ որ զիրքը կարգախեց, տակը թուզում էին և խելքն էլ համարեա թէ իր տեղը չէր: Սեսաւ որ զիրքը կարգախեց, տառերը աչքերի տակը թուզում էին և խելքն էլ համարեա թէ իր տեղը չէր:

Դասեցի էլ բոլորովին չարբել: Եւ հասել է նպատակին: Վալսեր Սկոտն ասել, որ ու բոլոր մոլութիւններից սաստիկն է արբեցորութիւնը. դա ամենից աւելի մեր հոգեկան կարողութիւնի թրշնամի է: Միայն էդ չէ, արբեցորութիւնը նմանապէտ և պահպանութիւնի, քաղաքավարութիւնի, առողջութիւնի և պատւաւոր ապրելու թշնամին է:

առնելու համար հարկաւոր է կռվել էդ վատ բնաւորութենի հետ խոհեմութենով, մոածել և խորհիլ նրա հետեւանքների համար և էդպիտուլ վատ բընաւորութիւնը վախելով, զարգացնել մեր սրտի մէջ էն բարի ցանկութիւնը ները, որ միջոց են տալիս վատի հետ կռւելու: Խսդուր համար հարկաւոր, է, որ երիտասարդները իրանց լաւ ձանաչեն, սովորին իրանց բնաւորութիւնը և իրանց միտքն միտքն էն բարի ցանկութիւնը ները, ու գործունէութիւնը յարմարացնեն իրանց ընտրած լաւ ուղղութենին: Փանի մարդ աւելի է ձանաչում ինքն իրան, էնքան աւելի համեստ և պարկեշտ է լինում և աւելի քիչ կախումն է ունենում պատահամունքներից: Բոլոր յաղթութիւններից, զօրաւորն էն է, երբ մարդ կեանքի մէջ պատերազմելիս իր ժամանակաւոր նշն վայելութիւններից զրկում է իրան էն մոքով, որ ապագայի համար հաստատ բարօրութիւն ձարէ:

ԶԱՆԱՉԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Համբաւ Ա. Էջմիածնից: Գրում են Ս. Էջմիածնից, որ էնտեղ սեպակեմբերի 17-ին մեր ընդհանուր կաթողիկոսի ընտրութիւնն է էլէլ: Ըստրել են կաթողիկոսացու երկու կանդիդատներ՝ ա. Տաճկաստանի բրուսայի առաջնորդ գէորք եպիսկոպոսին բոլոր պատգամաւորների միաձայն հաւանութենութեան և բ. Հայութիսամնի առաջնորդ Մատթէոս արքեպիսկոպոսին: Սրանք կներկայացնելին Ռուսաց թագաւոր կայսրը:

Վախիջւեանի և Բեսարաքիսայիր հայոց առաջնորդը Առուկովումը: Էս տարի սեպակեմբերի 14-ին Մոսկվաւմը գտնված հայոց եկեղեցումը պատարագէտ էր Նախիջևանի և Բևսարաքիսայի հայոց առաջնորդ Նղիազար արքեպիսկոպոսը: Եկեղեցումը մեծ բաղմութիւն է էլէլ, բացի հայերից և բաւական ուներ:

Եղիազար արքեպիսկոպոսը 1865 թւի գեկատիմբերին նշանակվեցաւ Նախիջևանի և Բեսարաքիսայիր թւեմի հայոց առաջնորդ՝ վարդապետ Գարբիել Այվաղեանի տեղը: Սա մօտ 50 տարեկան մարդ է: Երեխայութենից մինչև հիմի սա Էջմիածնումն է էլէլ, որտեղ 1842 թւին վարդապետ է դառել, իսկ 1859 թւին ձեռնաղբալիս է եպիսկոպոս և մինչև հիմի Էջմիածնի սինողի անդամ է էլէլ:

Որովհեաւ հիմի էջմիածնի և Բեսարաբիայի հայոց թեմին պատկանում է նմանապէս և Մոսկովյա ու Պետերբուրգը, Սրբազն Առաջնորդը ման դարձվ իր թեմում կամենում է ծանօթանալիք հօտին աւելի մօտիկ: Սա ճանապարհորդելիս մնծ ուշադրութիւն է դարձնում առանասարակ ուստիմարաններին և հոգեղականների լուսաւորութենին: Մոսկովյումը սա շտափեցաւ տեսնել կազարեան Արևելեան լեզուների ճեմարանը, որտեղ սրբան ընդունելիս երկու ճառ կարդացին էդ ճեմարանի երկու աշակերտները: Սա ճանարաման տեղեկութիւններ է ժողովել նմանապէս և Ռուսաց հոգեոր դարձուների և ակադեմիաների մասին: Մոսկովի Ռուսաց հոգեոր ակադեմիան տեսաւ սա Տրոիցիկ-Սկրդիկովի Լավրան գնացած ժամանակը: Ենտեղ տեսնվեցաւ սա Մոսկովի Ռուսաց միտրոպոլիս Ֆիլարետի հետ: Լավրայի զգեստարանի ցուցակի տնդղելիս Եղիազար սրբազնը ուշադրութիւն է դարձրել մէկ խաչի վրայ էլած մակազդին, որ ցուցակումը վրացերէն է կոչված: Էդ մակազդիր հայերէն է էս տեսակ՝ և սա Սարկաւագ-վարդապէսու նորոդեցի էս խաչը, Տէր Աստուած ողորմի բոլոր աշխատաւորներին, 1069 թւին, ամէն: Ես Թւականը հայոցն է և համապատասխանում է Քրիստոսի Թւականի 1621 թւին:

Շուտով Մոսկովյա վերադառնալու է Եղիազար Սրբազնը Քիշնեով քաղաքը, որն որ Նախիջևանի և Բեսարաբիայի հայոց վիճակի առաջնորդարանն է:

Թէպէտ մինչեւ հիմի Քիշնեով քաղաքումն է էլել հայոց Նախիջևանի և Բեսարաբիայի վիճակի տուաջնորդարանը, բայց Սրբազնը Եղիազարը կամենում է առաջնորդարանը տեղափոխել Նոր Նախիջևան, որովհետև էդ քաղաքումն և դրա մօտ է բնակվում էդ վիճակի հայերի մնծ մասը:

Լուր Կոստանդնուպոլիսից: Ռուսաց ԱՄոսկովի համբաւաբերին մէջ տպված է, որ Կոստանդնուպոլիսի յունաց ԱՅրմօնիա անունով գաղեթի խօսքերով հայոց Քիշնե Աւարայրի» անունով գաղեթի խօսքագրող Մարկօ Եղամբեանցը դատաստանի տակ ընկաւ ուստաց գետապան գններալ իդնաւունի կարգադրութենուլ: Բայց ԱՅրմօնիա դաշնիթը չէ հաղորդում, թէ ինչ յանցանքի համար է արած էս կարգադրութիւնը:

Պետերբուրգի սենատումը նըշանակված Կովկասեցերուն վերաբերեալ գործերը: Անցեալ սեմբերի 22-ին Պետերբուրգի սենատի մն-

ժելոյ դեպարտամենտումը միւս կործերի հետ նշանակված էին քնններու և էս գործերը, որոնք Կովկասեցերուն են վերաբերում:

ա. Հրէայ Պատարկացից-վիլու և Գրիգոր Տէր-Մտեկանեանցի գործը փողի հաշիւների մասին, բ. գիւղացի Դաշիւա Բամանացիլու և քահանայ Տէր-Բարսեղեանցի գործը փողի հաշիւների մասին և գ. Մղղսի Բարսեղանցի որբերի կարւածքի ծախսելու դործը,

Թէիֆլիսի մաքստատունից: Թէիֆլիսի մաքստատն հաշիւներից երեսում է, որ էս տարի յունվարի 1-ից մինչեւ սեպտեմբերի 1-ը Եւրոպայից Պարսկաստան անց է կացրած կովկասի վրայ տրանզիսով 22,251 հակ ապրանք, որի քաշն է 133,711 փութ. իսկ Պարսկաստանից անց է կացրած Եւրոպայ կովկասի վրայ նմանապէս տրանզիսով 4868 հակ ապրանք, որի քաշն է 22,739 փութ.

ԱՐԵՒՏԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Լիմերագուլ սեպտեմբերի 20.

Բամբակի զինը վեր է քաշվում: Եսօր 20,000 հակ բամբակ ծախվեցաւ: Ամերիկայի միջակ տեսակ բամբակի ցենաների զինն է 15½ աշնա:

Մահմատեր սեպտեմբերի 20.

Բամբակի զնների բարձրանալուն քիչ հաւատ են ընծայում:

Պետերբուրդ սեպտեմբերի 20.

Կուրսը Լօնդոնի վրայ 30½ պէնա: Պարիմի վրայ . 320½ սանտիմ: 50% Լատարեյով առաջն փոխառութենի տոմակները 113½ մանէթ: — Երկրորդինը 107 մանէթ:

Պակին 6 մ 40 կ. Թէիֆլիս հոկտեմբերի 8:

Թէիֆլիսի բանկի բաժանումը 700 Երկրորդ լատարեյով փոխառութենի տոմակներ էլլ ունի ծախու: Տոմակի զինը 1866 թւի մարտի 1-ից սկսած շահով 110½ մ:

Կաքարը Ֆրանսիացոց . 9 մ. 90 կ. — Ամինը . . 10 մ. 40 կ. Արծաթը 84% 250 մ. — 72% 75 մ. Պակին 6 մ. 80 կ.

ՄԱՍՏԱԿՈՒՐ ՅԱՅՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թէիֆլիսումը գրավածառը. Ա.

Էնֆիամեամնցի մագաղինումը,

Շէալեան գիմնազիայումը պ. Ա.

Վարդաննեանցի մօտ և Պա-

ճառաւականի և Խմբագրամանիլ

ծախսվում է էս 1866 թւին աղպ-

ված Գ. Տ. Ա.-ի և Ա. Ե.-ի

աշխատասիրած ը ԸՆԹԵԲ-

ՅԱՐԱՆ ԵԲԵԽԱՆԵ-

ՐԻ ՀԱՐԱԾ ամունով գիր-

քը հատով 40 կոպեկով, իսկ

գումարով 35 կոպեկով:

Գրավածառը պ. Ի. Տէր Մի-

քայէլեանցի մագաղինումը ծախ-

վում է 1860 թւին տպված Գ.

Տ. Ա.-ի, Ա. Ե.-ի և նրանց ըն-

կերների աշխատասիրած ը ԲԱ-

ՐՈՅԱԿԱՆ ՊԱՏՄԱԿ-

ԹԻՒՆԻՑ, անունով երնխա-

ների կարդալու գիրքը հատով

15 կոպեկով, իսկ գումարով 12

կոպեկով:

Առաջիկայ 1867 թ. ս Մեղու Հայաս-

տանին լրագիրը. Կհրատարակիվ մի և

նոյն ընթացքով և ուղղութեամբ. ինչ-

պէս մինչև ցայդմ, այն զանազանու-

թեամբ միայն, որ եթէ բաժանորդա-

գրութեանց թիւը շատանայ, թերթը

կմեծանայ; Յանկացողները սորուագրվել

թիվլիսի մէջ կարող են դառնալ ուղ-

ղակի խմբագրասուն, և Համբարձում

էնֆիամեանցի մազաղիան կամ իս. Տէր

Միքայէլեանցի զրավաճառանոցը. իսկ

գրի քաղաքներում և գիւղերում

սորուագրվողները կարող են նամակով

դառնալ դէպի ի Խմբագրատունը, յայտ-

ներլով ջշդութեամբ իրանց հասցէն և

կամ մէր գործակալներին, որոնց յայտ-

նելով մեր խորհրդականներին, որոնց յայտ-